



«Արդշինբանկ» ՓԲԸ վճարային քարտերի վարկավորման կանոնների փոփոխությունների նկարագիրը ներկայացված է ստորև

Լրամշակում	
<p>2.1.11. Հաճախորդն իրավունք է վերապահում Բանկին անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդին ծանուցման և(կամ) վերջինիս կողմից լրացուցիչ հանձնարարության, Վարկային գծի չօգտագործված մասն ուղղել Հաճախորդի՝ Բանկի հանդեպ առկա պարտավորությունների (ժամկետային և(կամ) ժամկետանց) մարմանը, ինչի արդյունքում Վարկային գծի չօգտագործված մասը համարվում է Հաճախորդի կողմից օգտագործված:</p> <p>2.1.12. Հաճախորդն իրավունք է վերապահում Բանկին անակցեպտ կարգով՝ առանց Հաճախորդին ծանուցման և(կամ) վերջինիս կողմից լրացուցիչ հանձնարարության, Հաճախորդի հաշվին մուտքագրված կամ առկա միջոցներն ուղղել Հաճախորդի՝ Բանկի հանդեպ առկա պարտավորությունների (ժամկետային և(կամ) ժամկետանց) մարմանը:</p>	
Գործող կարգավորում	Փոփոխություն
<p>4.1.6. Միակողմանիորեն փոփոխել աշխատավարձային նախագծերի շրջանակներում Բանկի հետ համագործակցող Կազմակերպությունների աշխատակիցներին տրամադրված վարկային գծերի վարկավորման պայմանները, եթե կատարվում է Կազմակերպության համար հաստատված սակագնային և վարկավորման պայմանների փոփոխություն, Հաճախորդը տեղափոխվում է աշխատանքի այլ Կազմակերպություն կամ Կազմակերպության հետ աշխատավարձային նախագծերի շրջանակներում համագործակցությունը դադարեցվում է՝ հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով:</p>	<p>4.1.6. Միակողմանիորեն փոփոխել աշխատավարձային նախագծերի շրջանակներում Բանկի հետ համագործակցող Կազմակերպությունների աշխատակիցներին տրամադրված վարկային գծերի վարկավորման պայմանները, եթե կատարվում է Կազմակերպության համար հաստատված սակագնային և վարկավորման պայմանների փոփոխություն, եթե խախտվել, փոփոխվել կամ դադարել է Կազմակերպությունների հետ համագործակցության որևէ պայման, որը հանդիսացել է տվյալ Կազմակերպության աշխատակիցներին՝ Բանկի հետ համագործակցության ուժով արտոնյալ պայմաններով վարկավորման նախապայման (եթե անգամ նշվածը տեղի է ունեցել Հաճախորդի կամքից անկախ հանգամանքներով), եթե Հաճախորդը տեղափոխվում է աշխատանքի այլ Կազմակերպություն կամ Կազմակերպության հետ աշխատավարձային նախագծերի շրջանակներում համագործակցությունը դադարեցվում է՝ հաճախորդին պատշաճ կերպով ծանուցելով:</p>

Փոփոխված պայմաններին կարող եք ծանոթանալ Բանկի պաշտոնական www.ardshinbank.am կայքէջից: